

1819



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

*Handwritten signature*

Համարձում Մաթևոսյան

«20» 03 2026թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 031 - 26

Նախաձեռնող՝

«ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ  
ք. Երևան Ռիգայի 126/4 բն. 49

Գործունեությունը՝

«Գոգհովիտի» բազալիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանում՝ ընդլայնում և գործող հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի վերազինում  
Շիրակի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 031 - 26

«20» Մարտի 2026թ.

**Շիրակի մարզի «Գոգհովիտի» բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման ընդլայնման և գործող հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Գոգհովիտ, Ցողամարզ բնակավայրեր

**Ներածական մաս.** «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսվում է Շիրակի մարզի Աշոցք համայնքում իրականացնել «Գոգհովիտի» բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման ընդլայնման և գործող հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Ընկերությունը սույն նախագծով նախատեսում է Շիրակի մարզի Գոգհովիտի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների ընդլայնում և գործող ջարդիչ տեսակավորող կայանի /ՋՏԿ/ վերազինում՝ նոր ժամանակակից սարքավորումներով: «Գոգհովիտի» բազալտների հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Շիրակի մարզի Աշոցք խոշորացված համայնքի Գոգովիտ և Ցողամարզ բնակավայրերի վարչական սահմաններում: Հայցվող տեղամասը Գոգհովիտ բնակավայրի ամենամոտ շինությունից գտնվում է 620 մ դեպի հյուսիս-արևելք, Բանդիվան բնակավայրի ամենամոտ շինությունից՝ 2,1 կմ դեպի հարավ-արևելք, Թորոսյուր բնակավայրի ամենամոտ շինությունից՝ 1,7 կմ դեպի հյուսիս-արևմուտք և Ցողամարզ բնակավայրի ամենամոտ շինությունից՝ 0,9 կմ դեպի հարավ-արևմուտք հեռավորությունների վրա:





Մ-1 միջպետական ավտոճանապարհից հայցվող տարածքը գտնվում է 1.4 կմ դեպի արևմուտք, հանրապետական նշանակության Հ-32 ավտոճանապարհը՝ 0.7 կմ դեպի հարավ և տեղական նշանակության S-7-34 ավտոճանապարհը՝ 0.97 կմ դեպի հյուսիս հեռավորությունների վրա: Մորֆոլոգիական տեսակետից Գոգիովիտի բազալտների հանքավայրի օգտակար հաստվածքը իրենից ներկայացնում է փոքր թեքությամբ սարահարթ և գտնվում է 1920-1943 մ բացարձակ բարձրության վրա՝ զբաղեցնելով մոտ 27.14 հա ընդհանուր մակերեսով տարածք:

Տարածքը բնութագրվում է հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ 40° 56' 15" հյուսիսային լայնությամբ, 43° 50' 22" արևելյան երկայնությամբ:

Հայցվող տեղամասի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

Շրջանի երկրաբանական կտրվածքում մասնակցում են վերին և ստորին կավիճի, ստորին և միջին էոցենի, օլիգոցենի, վերին միոցենի, միջին և վերին պլիոցենի և չորրորդական հասակի ապարները: Տեղամասի օգտակար հաստվածքը ծածկող ապարների միջին հզորությունը կազմում է 0.98 մ, որից 0.42 մ ներկայացված է փոխք հողաբուսական նստվածքներով, իսկ 0.56մ-ը ուժեղ ճեղքավորված մասամբ հողմահարված բազալտներով: Օգտակար հաստվածքի միջին հզորությունը 7.62 մ է, առավելագույնը՝ 14.4 մ:

Օգտակար հանածոյի շերտաձև մարմինը մակերեսային մասում ուժեղ ճեղքավորված է, իսկ ստորին մասը ներկայացված է թույլ ծակուտկեն, զանգվածային բազալտներով, որոնք խախտված են անջատման ճեղքերով: Ներկայումս ընկերությունն իրականացնում է ընդերքօգտագործման աշխատանքներ թիվ 601 ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում: Լիազոր մարմնի կողմից հանքավայրի ներկայիս և նախկինում ուսումնասիրված տարածքները դիտարկվել են որպես մեկ հանքավայր և սահմանվել է լեռնահատկացման ակտով: Զարդիչ կայանքը, որտեղ ներկայումս իրականացվում է հանքավայրի օգտակար հանածոյի հանույթի /բազալտ/ և հանույթից առաջացած ջարդքարի /բազալտների ջարդքարեր/ մշակում, գտնվում է հանքավայրի տարածքում՝ գործող լեռնահատկացման ակտի սահմաններում:

Հանքավայրի բազալտների մարմնի մերձմակերևույթային և սակավաթեք տեղադրվածությունը, օգտակար հաստվածքը ծածկող ապարների ու օգտակար հաստվածքի ոչ մեծ հզորությունները թույլ են տալիս հանքավայրի մշակումը իրականացնել բաց եղանակով: Շրջանի հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում սևահողերի տարբեր ենթատիպերով: Սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում: Հայցվող տարածքում զարգացած են 0.3-0.6 մ հզորությամբ կարբոնատային սևահողերը: Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հայցվող տարածքից վերցվել է 4 նմուշ, որոնց կրճատման և միացման արդյունքում ձևավորվել է մեկ միասնական փորձանմուշ:

Մինչև ընդլայնումը ընկերության կողմից շահագործվել է շուրջ 0,5 հա մակերեսով տարածք, որտեղից հեռացվել է 2145 մ<sup>3</sup> ծավալով հողաբուսական շերտ, ներկայումս այն պահեստավորված է շահագործված բացահանքի հարավ-արևմտյան հատվածում





զբաղեցնելով 0,19 հա մակերես: Վերականգնված հողեր չկան, քանի որ հանքավայրը պետք է ամբողջությամբ շահագործվի:

«Գոգհովիտի» հանքավայրի տարածքում կատարված երկրաբանական ուսումնասիրության, ինչպես նաև առ այսօր շահագործական աշխատանքների արդյունքներով պարզվել է, որ հանքավայրը գործնականում ջրազուրկ է: Մակերևութային ջրերը ճեղքերով անցնում են բազալտի հաստվածքով և ներթափանցելով ստորադիր ապարների մեջ բեռնաթափվում են Զրաձոր գետակի հովտում:

Համաձայն գնահատման հաշվետվության տեղեկատվության՝ հայցվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակները բացակայում են:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցություններ չի դրսևորվելու, քանի որ «Արփի լիճ» ազգային պարկի ամենամոտ՝ «Ախուրյանի կիրճ»-ը Գոգհովիտի բազալտների հանքավայրի հայցվող տեղամասից գտնվում է 9 կմ հեռավորության վրա: Գոգհովիտ և Յողամարգ բնակավայրերի պատմամշակութային հուշարձաններով զբաղեցրած հողակտորները գտնվում են հայցվող տարածքից 0.82 - 4.34 կմ հեռավորության վրա: Հետևաբար, պատմամշակութային հուշարձանների վրա որևիցե ազդեցություն արդյունահանման աշխատանքների հետևանքով չի դրսևորվելու:

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները WGS-84 (ARMREF 02) համակարգով հետևյալն է՝

- |                                  |                                  |
|----------------------------------|----------------------------------|
| 1. Y=8401793.232 X=4534368.338,  | 2. Y=8401734.575 X=4534478.305,  |
| 3. Y=8401843.288 X=4534504.635,  | 4. Y=8401856.875 X=4534547.660,  |
| 5. Y=8401942.628 X=4534567.545,  | 6. Y=8401936.387 X=4534649.502,  |
| 7. Y=8402064.334 X=4534675.477,  | 8. Y=8402069.122 X=4534673.729,  |
| 9. Y=8402086.502 X=4534492.700,  | 10. Y=8402209.114 X=4534501.990, |
| 11. Y=8402217.578 X=4534462.300, | 12. Y=8402269.848 X=4534444.344, |
| 13. Y=8402290.259 X=4534418.704, | 14. Y=8402315.465 X=4534415.746, |
| 15. Y=8402358.193 X=4534419.156, | 16. Y=8402421.346 X=4534434.690, |
| 17. Y=8402451.433 X=4534447.499, | 18. Y=8402487.396 X=4534472.485, |
| 19. Y=8402561.222 X=4534458.706, | 20. Y=8402578.467 X=4534440.534, |
| 21. Y=8402621.677 X=4534441.198, | 22. Y=8402699.535 X=4534359.094, |
| 23. Y=8402750.895 X=4534364.151, | 24. Y=8402902.942 X=4534387.439, |
| 25. Y=8402923.889 X=4534395.093, | 26. Y=8402941.675 X=4534388.564, |
| 27. Y=8402931.024 X=4534305.762, | 28. Y=8402669.342 X=4534261.984, |
| 29. Y=8402421.097 X=4534220.212, | 30. Y=8402420.001 X=4534294.957, |
| 31. Y=8402411.863 X=4534293.971, | 32. Y=8402394.000 X=4534287.000, |
| 33. Y=8402359.000 X=4534256.000, | 34. Y=8402316.000 X=4534251.000, |
| 35. Y=8402261.000 X=4534261.000, | 36. Y=8402206.000 X=4534289.000, |
| 37. Y=8402191.000 X=4534306.000, | 38. Y=8402183.000 X=4534351.000, |
| 39. Y=8402168.000 X=4534388.000, | 40. Y=8402060.577 X=4534441.130, |
| 41. Y=8401871.271 X=4534396.026, | 42. Y=8401793.232 X=4534368.338, |

Շիրակի մարզի «Գոգհովիտի» բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի օգոստոսի 23-ի № 1950-Ա հրամանով: Հաշվեկշռային պաշարները իրենց որակով բավարարում են բլոկների արդյունահանման հումքին՝ 9479-2011 ԳՕՍՍ-ով «Բլոկներ լեռնային ապարներից՝ երեսապատման ճարտարապետաշինարարական, մեմորիալ և այլ իրերի արտադրության համար»:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է հանքավայրը շարունակել շահագործել բաց լեռնային աշխատանքներով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների,





մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Բացահանքի օտարման տարածքը կազմում է 18.2256 հա, ծառայման ժամկետը՝ 20 տարի, կորզվող պաշարները կազմում են 1177.485 հազ.մ<sup>3</sup>, տարեկան արդյունահանվող պաշարները՝ 58874 մ<sup>3</sup>: Մարվող պաշարների քանակն է՝ 1356.46 հազ.մ<sup>3</sup>, տարեկան արտադրողականությունը՝ 67823 մ<sup>3</sup> մարվող պաշար:

Բացահանքը վերջնական դիրքում բնութագրվելու է հետևյալ պարամետրերով՝

- ամենամեծ երկարությունը՝ 1175 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 237 մ,
- ամենամեծ հզորությունը նախագծվող տեղամասում՝ 14.4 մ /միջինը 7.58մ/,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 0.93 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 1 356.46 հազ.մ<sup>3</sup>,
- մարվող պաշարների տարեկան քանակը՝ 67823 մ<sup>3</sup>,
- արդյունահանվող պաշարների քանակը՝ 1 177. 485 հազ.մ<sup>3</sup>,
- արդյունահանվող պաշարների տարեկան քանակը՝ 58 874 մ<sup>3</sup>,
- մակաբացման ապարների քանակը՝ 169.15 հազ.մ<sup>3</sup>,
- բացահանքի օտարման տարածքը կազմում է՝ 182 256 մ<sup>2</sup>,

Հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում նախագծային կորուստները պայմանավորված են ըստ լեռնատեխնիկական պայմանների օգտակար հաստաշերտի տեղադրման եզրագծի բարդության աստիճանից և անկման անկյունից: Դրանք ընդհանուր բացահանքային կորուստներ են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում: Այդ կորուստները կազմում են 13.19 %:

«Գոգհովիտի» բազալի հանքավայրից 200 մ հարավ-արևմուտք գտնվում է «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը պատկանող ջարդիչ տեսակավորող կայանը, որտեղ իրականացվում է բազալտների ջարդում և տեսակավորում:

Ջարդիչ կայանն իր ենթակառուցվածքներով զբաղեցնում է 0,23 հա մակերես, որի ծայրակետային կոորդինատներ են՝ (ըստ ARMWGS84 համակարգի):

	Y	X
1	8401942.731	4534217.514
2	8401919.857	4534248.242
3	8401950.362	4534262.26
4	8401994.438	4534265.314
5	8401995.183	4534254.571
6	8401986.988	4534233.485
1	8401942.731	4534217.514

ՋՏԿ-ի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության՝ 40° 56' 11", արևելյան երկայնության՝ 43° 50' 09":

ՋՏԿ-ի համար «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ -ին 08-034-0108-0031 ծածկագրով հողամասը ընդերքօգտագործման նպատակով Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 23.02.2021թ. թիվ 7 որոշումով վարձակալության իրավունքով տրամադրվել է ընկերությանը (ՎԿԱՅԱԿԱՆԻ N 05052022-08-0031): Հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնականը՝ արոտավայր: Ընդլայնվող բացահանքի մի մասը և ՋՏԿ-ի տարածքն ամբողջովին գտնվում է Գոգհովիտ բնակավայրի վարչական սահմաններում: Իսկ ընդլայնվող բացահանքի մյուս մասը գտնվում է Յողամարզ բնակավայրերի վարչական սահմանում: Վերագինման նպատակը նշանակող հումքի





տարեկան 60,0 հազ մ<sup>3</sup> արտադրական ցուցանիշի ապահովումն է, ինչի համար արտադրամասում նախատեսվում է փոխել առաջնային և երկրորդային ջարդիչները, որոնք կապահովեն ՋՏԿ-ում բարձր արդյունավետություն: Վերազինված արտադրամասը բնապահպանական տեսանկյունից կունենա դրական հետևանք, քանի որ ՋՏԿ-ն վերազինվելու է փոշեառաջացումը, ջրային շիթով կանխող տեխնոլոգիական սարքավորումով, որով կանխարգելվելու է փոշու տարածումը:

Բացահանքի հետագա աշխատանքների բնականոն իրականացման համար նախատեսվելու է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավային մասում գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհի 1920 մ բարձրության նիշից մինչև բացահանքի հարավ արևելյան մասի 1945.0 մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունը լինելու է 715 մ, լայնությունը՝ 7-8 մ, որի ամենամեծ թեքությունը՝ 78.65%: Հողային աշխատանքների ծավալը կազմելու է 1850 մ<sup>3</sup>:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝ հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ, անվտանգության բերմայի լայնությունը՝ 2.0 մ, աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝ 80<sup>0</sup>-90<sup>0</sup>, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 18-20 մ: Լեռնային զանգվածից մենաքարերի անջատումը իրականացվելու է ըստ անջատման ճեղքերի՝ բուլդոզերի և էքսկավատորի օգնությամբ, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Բազալտների հանքավայրից օգտակար հանածոյի հանույթի արդյունքում առաջանալու են թափոններ, որոնք ներկայացված են մակաբացման ապարներով 169150 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, այդ թվում՝ փոխար բեկորային առաջացումներ (հողաբուսական շերտ, որը չի հանդիսանում ընդերքօգտագործման թափոն) 76744 մ<sup>3</sup> և ուժեղ ճեղքավորված, ջարդոտված հողմնահարված բազալտներ՝ փուշտա 92406մ<sup>3</sup>:

Հանքարդյունահանման աշխատանքները սկսելիս մակաբացման ապարների՝ փոխար բեկորային առաջացումների շերտը տեղափոխվելու է բացահանքի հարավ արևմտյան մասը՝ N1 արտաքին լցակույտ: Իսկ հողմնահարված ջարդոտված ապարների շերտը արդյունահանման ժամանակ տեղափոխվելու են բացահանքի հարավ արևելյան մասը՝ N2-ը արտաքին լցակույտ:

Փոխար բեկորային առաջացումների /հողաբուսական շերտ/ պահպանումը իրականացվելու է Կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1396-Ն և Կառավարության 2017թ. փետրվարի 11 ի N 1404-Ն որոշումների պահանջների համաձայն:

Շահագործման 9-րդ տարվանից սկսած, շահագործմանը զուգընթաց սկզբում N2 լցակույտի մակաբացման ապարները կբերվեն բացված հատակի 1921.0 մ բարձրության վրա ներքին լցակույտի տեսքով՝ N3: Հետագա արդյունահանման ժամանակ բացված հանքաստիճանների վրա կտեղափոխվեն N2 և N1 լցակույտերի ապարները՝ միջինը՝ 1.0 մ բարձրությամբ և կհարթեցվեն: Սկզբում կփոփի հողմնահարված բազալտները, որի վրա կլցվեն փոխար բեկորային ապարները և կհարթեցվեն: Մինչև շահագործման ավարտը կկատարվի 164950 մ<sup>3</sup> ծավալի մակաբացման ապարների տեղափոխում և հարթեցում, իսկ մնացած 4200 մ<sup>3</sup>-ը կբերվի շահագործման ավարտից հետո, այսինքն կիրականացվի խախտված հողերի վերականգնում: Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Լցակույտերում մնացած մակաբացման ապարները 4200 մ<sup>3</sup> ծավալով լցվելու են 1920 մ բարձրության հորիզոնի հատակին և հարթեցվելու են: Սկզբում բուլդոզերով տեղափոխվելու է հողմնահարված բազալտները՝ 2400 մ<sup>3</sup> որի վրա լցվելու է ավտոինքնաթափով տեղափոխվող 1800 մ<sup>3</sup> ծավալով փոխար բեկորային ապարները և





հարթեցվելու են: Հարթեցումը կատարվելու է բացահանքի ողջ տարածքով՝ 171200 մ<sup>2</sup> մակերեսը և արտադրական հրապարակը՝ 10500 մ<sup>2</sup>:

Ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման ինչպես նաև արտադրական կարիքների համար: Խմելու ջուր ապահովվելու է Գոգհովիտ բնակավայրի ջրամատակարարման ցանցից:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումները, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, այդ միջոցառումներից են՝

- լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորում, լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա չեզոքացուցիչների տեղադրում, ինչը կնվազեցնի, կկրճատի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում՝ մակաբացման շերտի ապարներով,
- լցակույտի, խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում,
- արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները,
- շահագործման արդյունքում առաջացող կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, ինչի հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով,
- կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ՝ վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություններ և այլն:

Լեռնատեխնիկական վերականգնման ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կազմելու է 4310.8 հազ.դրամ: Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, հնարավոր արտակարգ իրավիճակների կառավարման բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Բնապահպանական օդը աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես շեղբացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ տարին մեկ անգամ հաճախականությամբ:





3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4. Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան 850 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և լուսններն իրականացվել են Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ և Յողամարզ բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերում: Հանրային լուսններում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Շիրակի մարզպետարանից, Աշոցքի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակման ժամանակ: Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են լեռնային նախապատրաստական աշխատանքների և արդյունահանման հետ՝ համաձայն գնահատման հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել Աշոցք համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմնին:

3. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել Կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

4. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար շրջակա





- 5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
- 6. Աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- 7. Առաջնորդվել Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 611-Լ որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների» ծրագրով սահմանված պահանջներով:

**ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ**


«ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի «Գոգհովիտի» բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման ընդլայնման և գործող հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



*[Handwritten signature]* Երիզնագ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան